ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/87

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Գավառի քաղաքապետարան
Բողոք բերող՝ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ
Երրորդ անձ՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ
ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

Մասնակցությամբ՝
Գավառի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Ա. Մարտիրոսյանի,
«Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի տնօրեն՝ Ժ. Խաչատրյանի,
«Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի,
ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Մ. Սահակյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթ, Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)

կողմից 29.07.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 29.07.2020թ.-ին:

29.07.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/87 համարի ծածկագիրը և հրապարակվել www.gnumner.am կայքում:

03.08.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

03.08.2020թ.-ի երրորդ անձի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 05.08.2020թ.-ի թիվ ԲՔԱ-ԼՕ/1/11644-2020 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը:

04.08.2020թ.-ին, 10.08.2020թ.-ին և 12.08.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.08.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.08.2020թ.-ին:

2. **<u>«Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն 29.07.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գավառի համայնքապետարանի կարիքների համար՝ Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45231160:

Ըստ www. gnumner.am առկա տվյալների ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով՝ 45231160 նշվել է, այսինքն փաստացի հատկացվել է 289 978 միլիոն ՀՀ դրամ գումար:

Ըստ armeps.am/ppcm/ համակարգում առկա տվյալների համաձայն՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով՝ 45231160 նշվել է, այսինքն փաստացի հատկացվել է 289 978 միլիոն ՀՀ դրամ գումար:

Ընթացակարգով հայտարարվել է 2020 թվականի հունիսի 3 N 1 որոշմամբ:

Ընթացակարգի հրավերով սահմանված վճարման ժամանակցուցի համաձայն՝ ժամանակացույցում գումարը նախատեսվել է տոկոս, իսկ տոկոսով վճարման ժամանակացույցը նշվում է միայն այն ժամանակ, երբ գնման ընթացակարգը իրականացվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15 հոդվածի 6 մասի հիման վրա, իսկ այս դեպքում քանի որ գնումների պլանում առկա է եղել տվյալ գնման ընթացակարգի համար ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուն այն թողել է այդ տեսքով, որպեսզի ստեղծվի այնպիսի տպավորություն, որ գնումը կազմակերպվում է Օրենքի 15 հոդվածի 6 մասի հիման վրա:

Հայտերի բացումը տեղի է ունեցել 15.07.2020 թվականին:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ- ն, <Քյավառ Սերվիս> ՍՊԸ-ն և ՎՄՎ Քամփանի ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման 17.07.2020թ թվագրված նիստի թիվ 3 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:

Այս մասով ցանկանում ենք հայտնել, որ եթե հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմանների, ապա հանձնաժողովը կարող է անել երկու գործողություն, կամ մերժել կամ առաջարկել շտկել անհամապատասխանություն, եթե առկա է այդպիսին, տվյալ պարագայում խախտելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ թիվ 526-N որոշմամբ հաստատված կարգի 40 կետի 4 ենթակետի և 41 կետի պահանջները:

Սակայն նույն արձանագրության 4 կետով հանձնաժողովը «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ հրավիրել է միաժամանակյան բանակցությունների, խախտելով Գնումների մասին ՀՀ օրենքի 38 հոդվածով, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017 թ թիվ 526-N որոշմամբ հաստատված կարգի 40 կետի 5 ենթակետի դրույթները:

Այսպիսով խախտումները չեն ավարտվում: Եվ այսպես.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.07.2020 թ նիստի N 4 արձանագրությամբ նույն հանձնաժողովը որոշում է կասեցնել բանակցությունների նիստը, քանի որ ՎՄՎ Քամփանի ՍՊԸ-ն չեր ներկայացել բանակցություններին, սակայն տվյալ դեպքում քանի որ բոլոր մասնակիցները պատշաճ ծանուցված էին նիստի օրվա ժամի և վայրի մասին, ինչը կարող է հավաստել նաև Պատվիրատուն, իրավունք չուներ բանակցությունները հետաձգել և նշանակել նոր բանակցություններ, այն պատճառով, որ մեկ կազմակերպություն չի ներկայացել բանակցությունների, հաշի չառնելով այն, որ դա մասնակցի իրավունքն է այլ ոչ թե պարտավորությունը:

Շարունակելով խախտումները նույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.07.2020 թ N 5 արձանագրությամբ, որոշում է մերժել «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ հայտը, այն պատճառով, որ այն չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, առանց մանրամասն նկարագրելեվ խախտման հիմքը և հիմնավորումները, այլ ուղակի հղում է տափս Գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված նորմերին, կրկին առանց մեկնաբանության և իրավական հիմնավորման:

Նույն արձանագրությամբ կրկին խախտելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ թիվ 526-N որոշմամբ հաստատված կարգի դրույթները հանձնաժողովը ոչ թե հաղթող, այլ առաջին տեղ զբաղեցնող է ճանաչում <Քյավառ Սերվիս> ՍՊԸ, ինչը գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված չէ:

Այդքանից հետո գնահատող հանձնաժողովը www.gnumner.am կայում հրապարակում է պայմանագիր կնքելու մասին որոշում և հաղթող է ճանաչում <Քյավառ Սերվիս> ՍՊԸ-ին:

Անդրադառնալով ևս մեկ խախտմանը.

Պատվիրատուն գնումների պլանում տվյալ գնման համար նախատեսելով ֆինանսական միջոցներ գնման ընթացակարգի հրավերով չի նախատեսել հայտի ապահովման ներկայացման պարտադիր լինելու պայմանը, ինչի արդյունքում ևս թույլ է տվել Գնումների մասին ՀՀ օրենքի կոպիտ խախտում, ստեղծելով բարենպաստ պայմաններ այլ մասնակիցների համար:

Ուսումնասիրելով <Քյավառ Սերվիս> ՍՊԸ-ի հայտը, պարզ է դառնում, որ վերջինս չի ներկայացրել հայտի ապահովում բանկային երաշխիքի կամ կանխիկ գումարի չափով, ինչի պարագայում մասնակցի հայտը ենթակա է մերժման, քանի որ հրավերում չկա որն նշում այն մասին որ գնման ընթացակարգը հայտարարվել է 15 հոդվածի 6 մասի հիման վրա, որեմն մասնակիցը պետք է ներկայացներ հայտի ապահովում, սակայն չի ներկայացրել:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն օրենքի նպատակն է ապահովել գնումների և գնումների գործընթացի տնտեսող, այպյունավետ և օգտավետ իրականացումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խարական հիմունքներով կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ ենթակետերի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի.

- հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը.

- նշում է այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 5.2. կետի համաձայն մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Նույն հրավերի 5.3. կետի համաձայն եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի հանրա¬պետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Հրավերի համաձայն հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները մեկ թվով արտահայտված: Ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Նույն հրավերի 8.7-րդ կետի «դ» պարբերության համաձայն յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ «ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթ հանձնաժողովի կողմից խախտվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով, 38-րդ հալվածով, Կարգի 40-րդ կետով, 41-րդ կետով սահմանված դրությները, ինչը հանգեցրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ինչպես նաև 34-րդ հոդվածի պահանջների խախտմանը, ինչը խոչընդոտ է հանդիսացել գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման համար:

Նման պայմաններում գտնում ենք, որ գնման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած, որպեսզի հնարավոր լինի ապահովել Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի

հավասար մրցակցային և ոչ խտրական հիմունքներով գնման ընթացակարգի կազմակերպումը, քանի որ այլ կերպ հնարավոր չէ որևէ այլ գնահատող հանձնաժողովի որոշում դադարեցնելու դեպքում վերականգնել մասնակիցների իրավունքները։»:

Ելնելով վերոգրյալից, «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

3. **<u>Գավառի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 29.07.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/11332-2020 գրությամբ դիմել է Գավառի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից 29.07.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 03.08.2020թ.-ին թիվ 497 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Գավառի քաղաքապետարանի կարիքների համար Բուռնաղյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2020 թվականի հունիսի 3-ին ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով մրցույթը /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, որի մասին են վկայում հետևյալ փաստերը՝

- *https://www.armeps.am/ppcm/public/procurements էլեկտրոնային համակարգի գնումների պլանների բաժնում 45231160/502 գնումների միասնական անվանացանկի կոդով /ԳՄԱ, CPV կոդեր/ հայտարարված մրցույթի միավորի գին և ընդամենը գումար տողերի դիմաց նշված չի ֆինանսական միջոցների առկայություն, այսինքն մրցույթը հայտարարելիս վերը նշված կայքի համապատասխան մասում նշվել է 15/6,*

- *Ընթացակարգի հրավերի փաթեթի II-րդ մասի օրացույցային գրաֆիկում /հավելված 2/ աշխատանքների կատարման ժամկետների սկիզբը սահմանվել է «ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից», իսկ որպես ավարտ՝ «ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացուցային օր»,*
- *Ընթացակարգի հրավերի փաթեթի II-րդ մասի վճարման ժամանակացույցում /հավելված 3/ աշխատանքի դիմաց վճարումների մասով նշվել են միայն տոկոսներ,*
- *Բյուջետային ծախսերի համապատասխան հոդվածով ակնհայտ երևում է, որ Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար մրցույթ կազմակերպելիս նախատեսված չեն եղել ֆինանսական միցոցներ,*
- *04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ մասով սահմանվում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով մրցույթը կազմակերպելու դեպքում հայտի ապահովման պահանջ չի սահմանվում, ինչով էլ պայմանավորված մրցույթը հայտարարելիս չի սահմանվել նման պահանջ:*

Նշենք, որ գնահատող հանձնաժողովի հայտերի բացման 2020 թվականի հուլիսի 17-ի թիվ 3 նիստում արձանագրված ««Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում՝

Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին», տեխնիկական վրիպակի հետևանք է ինչպես նաև՝ ենթակա շտկման: Պարզ է նաև, որ եթե արձանագրված փաստը տեխնիկական վրիպակ չլիներ ապա գնահատող հանձնաժողովը Ընթացակարգը կասեցնելու որոշում կկայացներ, բայց մասնակիցները 2020 թվականի հուլիսի 21-ին հրավիրված են եղել միաժամանակյա բանակցությունների:

«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ն չի ներկայացել հուլիսի 21-ի բանակցություններին և գնահատող հանձնաձողովը հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի և Ընթացակարգի հրավերի փաթեթի 1-ին մասի 8.7-րդ կետի պահանջները որոշում է կայացրել կասեցնել նիստը 1/մեկ/ աշխատանքային օրով:

2020 թվականի հուլիսի 23-ի թիվ 5 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը մերժելով «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը 3-րդ կետով նշել է «Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետը և սույն թվականի հունիսի 3-ին

ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերի փաթեթի 1-ին մասի 5.1-րդկետը», այսինքն գնահատող հանձնաժողովը ունեցել է հստակ հիմնավորում «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը մերժելու մասով:

2020 թվականի հուլիսի 23-ի թիվ 5 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը «1-ին տեղ զբաղեցրած մասնակից» կապակցությունն է նշել և հիմք ընդունել, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված չի մասնակցին հաղթող ճանաչելու փաստը, այլ նշվում է, որ գնահատող հանձնաժողովը սահմանված պահանջներին համապատասխանող հայտերից որոշում և ընտրում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Նկատելի փաստ է նաև այն, որ մրցույթի մասնակից «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն մինչ հայտ ներկայացնելն ու մրցույթին մասնակցելը չի բողոքարկել և/կամ պահանջել որևէ պարզաբանում իր կողմից նշված անհամապատասխանությունների վերաբերյալ, և մասնակցելիս էլ չի ներկայացրել հայտի ապահովում, սակայն իր կողմից ներկայացրած 2020 թվականի հուլիսի 29-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/87 բողոքում նշել է, որ և սահմանվել է ֆինանսական միջոցներ և հրավերով չի սահմանվել հայտի ապահովման պարտադիր պահանջ, ինչը չի համապատասխանում իրականությանը:

Այսպիսով, «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բողոքում առկա են հետևյալ խնդիրները.

Նախ, պետք է փաստել, որ բողոքի առաջին բաժնում «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն վիճարկել է հրավերի բովանդակությունը, ինչպես նաև դրա համապատասխանությունը գնումների պլանին: Մինչդեռ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Գտնում ենք, որ բողոքը այս մասով պետք է ներկայացվեր մինչև տվյալ մրցույթով հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Մինչդեռ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն հայտ ներկայացնելով ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով մրցույթին, մասնակցելով բանակցություններին և մյուս մասնակցին զիջելով իր նվազեցված գնային առաջարկով (քանի որ գնային առաջարկի ինքնարժեքից նվազեցումը արգելվում է), բաց մրցույթի ավարտական փուլում որոշել է վիճարկել հրավերի պահանջները, որոնք ակնհայտորեն չէին կարող ոտնահարել վերջինիս շահերը, առավել ևս բողոքարկվել այս փուլում:

բ) Նշենք, որ գնահատող հանձնաժողովի հայտերի բացման 2020 թվականի հուլիսի 17-ի թիվ 3 նիստում արձանագրված «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում՝ Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին» տեխնիկական վրիպակը նույնպես էական նշանակություն չի կարող ունենալ ողջ մրցույթի արդյունքը որոշելու համար, ինչպես նաև չի կարող առաջացնել «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի շահերի ոտնահարում, քանի որ նշված արձանագրությունից հետո ԲԲԸ-ն մասնակցել է այդ մրցույթով հրավիրված բանակցություններին և իրացրել իր մասնակցության իրավունքը, և մյուս մասնակցին զիջելով իր նվազեցված գնային առաջարկով (քանի որ գնային առաջարկի ինքնարժեքից նվազեցումը արգելվում է), բաց մրցույթը ավարտին հասնելուց՝ նոր որոշել է բարձրաձայնել նշված տեխնիկական վրիպակը:

ՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը նաև հիմնավորել է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը՝ մատնանշելով գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան պահանջը, այն է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետը և սույն թվականի հունիսի 3-ին ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերի փաթեթի 1-ին մասի 5.1-րդկետը»: Ավելին, այս հիմքը բանակցությունների փուլում ԲԲԸ-ի ներկայացուցիչներին նաև բացատրվել է և հայտնվել, որ գնային առաջարկի ինքնարժեքից նվազեցում կատարելը արգելվում է, քանի որ այդ դեպքում գնային առաջարկը կհակասի նշված նորմերի պահանջներին: Հատկանշական է, որ նիստի ժամանակ այս հարցի հետ կապված «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն հայտարարել է, որ ինքնարժեքից նվազեցման հետ կապված հարցը կվիճարկի գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, ինչին հանձնաժողովը պատասխանել է, որ վստահ է այս հիմքով մասնակցի հայտը մերժելու հարցի իրավաչափության մեջ, քանի որ առկա է թե ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը ինքնարժեքի նվազեցման իրավաչափության հետ կապված, և թե գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց համապատասխան որոշումները: Սակայն, ի զարմանս գնահատող հանձնաժողովի, բողոքը ներկայացվել է միանգամայն այլ, մտածածին հիմքերով, մի կողմ թողնելով «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին մտահոգություն պատճառած իրական հիմքը:

Գտնում ենք, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից բարձրաձայնած մտածածին կամ տեխնիկական վրիպակի արդյունք հանդիսացած հիմքերը չեն կարող դիտարկվել որպես գնումների մասին ՀՀ օրենսդրության այնպիսի խախտումներ, որոնք ինչպես նշում է ԲԲԸ-ն,

հանգեցրել են գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանը: Ավելին, նման հիմնավորումներով մրցույթի չեղարկումը էական վնաս կարող է հասցնել Գավառ քաղաքի, իսկ ընդհանուր առմամբ նաև ողջ պետության օրինական շահերին, քանի որ մրցույթի չեղարկման դեպքում Գավառի քաղաքապետարանը ստիպված է լինելու կրկին հայտարարել բաց մրցույթ, այնուհետև այն ամփոփել, որի արդյունքում լավագույն դեպքում նոր հայտարարված մրցույթով պայմանագրի կատարումը կարելի է ակնկալել միայն 3 ամիս հետո, որի արդյունքում փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքները ստիպված պետք է կատարվեն վատ եղանակային պայմաններում:

Հարգելի պարոն Օհանյան, սույն բողոքը քննելիս՝ խնդրում ենք նաև նկատի ունենալ վերոհիշյալ փաստարկը նույնպես»:

4. **<u>Երրորդ անձ՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, թիվ «ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից ճանաչված «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

«Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ն 03.08.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) կողմից 29.07.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/87 ծածկագրով բողոքը, որի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ առարկությունները.

Եվ այսպես՝ Գավառի քաղաքապետարանի կարիքների համար Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.06.2020թ. հայտարարվել է «ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթ /այսուհետ նաև Ընթացակարգ/:

Նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների և որոշումների դեմ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից 29.07.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ներկայացվել է բողոք:

Գտնում ենք, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը հանդիսանում է իրավունքի չարաշահման կլասիկ դրսևորում:

Մասնավորապես, այս բողոքը ներկայացնելու իրական դրդապատճառը հանդիսանում է այն, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետը և ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերի փաթեթի 1-ին մասի 5.1-րդկետը, քանի որ բանակցությունների փուլում «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն կատարել է նվազեցում նաև գնային առաջարկի ինքնարժեքից:

Սակայն, ենթադրաբար, հասկանալով, որ այս հիմքով բողոք ներկայացնելը դատապարտված է տապալման, քանի որ առկա են գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց բազմաթիվ նախադեպային որոշումներ, որոնցով նույնպես արձանագրվել է, որ ինքնարժեքից նվազեցումը արգելվում է:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ներկայացված բողոքի ամբողջ իրավական հիմքը կառուցված է հենց ինքնարժեքից նվազեցման իրավաչափությունը հիմնավորելու համար, մինչդեռ բողոքում վիճարկվել են միանգամայն այլ փաստեր:

Պարոն Օհանյան, խնդրում ենք նկատի ունենալ նաև այն կարևոր փաստը, որ Բողոքաբերը այդպես էլ չի հիմնավորել, թե իր կողմից մատնանշված բացթողումները և տեխնիկական վրիպակները ինչպես են հանգեցրել իր կողմից վկայակոչված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28, 34 և 38 հոդվածների, ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40 և 40 կետերի պահանջների խախտմանը, որոնք էլ իրենց հերթին իբրև թե հանգեցրել են Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի պահանջների խախտմանը:

Գտնում ենք, որ նշված փաստերը որևէ կերպ չէին կարող հանգեցնել Բողոքաբերի կողմից մատնանշված նորմերի խախտմանը, առավել ևս չէին կարող հանգեցնել գնումների տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքի խախտմանը, ինչպես նաև չէին կարող առաջացնել ընթացակարգը ոչ մրցակցային և խտրական հիմունքներով կազմակերպելուն:

Միևնույն ժամանակ, «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բողոքում առկա են հետևյալ խնդիրները.

ա) Նախ, պետք է փաստել, որ բողոքի առաջին բաժնում «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն վիճարկել է հրավերի բովանդակությունը, այդ թվում նաև հայտի ապահովման առկայության անհրաժեշտության փաստը, ինչպես նաև Հրավերի համապատասխանությունը գնումների պլանին: Մինչդեռ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը

բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Գտնում ենք, որ բողոքը այս մասով պետք է ներկայացվեր մինչև տվյալ մրցույթով հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Մինչդեռ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն, հայտ ներկայացնելով ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով մրցույթին, մասնակցելով բանակցություններին և մյուս մասնակցին զիջելով իր նվազեցված գնային առաջարկով (քանի որ գնային առաջարկի ինքնարժեքից նվազեցումը արգելվում է), բաց մրցույթը ավարտական փուլում որոշել է վիճարկել հրավերի պահանջները, որոնք ակնհայտորեն չէին կարող ոտնահարել վերջինիս շահերը, առավել ևս բողոքարկվել այս փուլում:

Հարգելի պարոն Օհանյան, գտնում ենք, որ եթե ընթացակարգի ավարտման փուլում, երբ արդեն իրավաչափորեն որոշում է կայացվել պայմանագիր կնքել այլ մասնակցի հետ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջների շրջանցմամբ Ձեր կողմից մրցույթը չեղարկվի Հրավերի նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու եղանակով, ապա վերոհիշյալը կարող է վտանգավոր նախադեպ դառնալ ողջ պետական գնման դաշտի համար, և այն մասնակիցները, որոնք չեն հաղթել պետական մրցույթներում, դրանով իսկ հնարավորություն կստանան մրցույթների ավարտական փուլում Հրավերում բացթողումներ հայտնաբերելով, բողոքարկել ցանկացած մրցույթ՝ պահանջելով դրանց չեղարկումը:

Այս հարցի հետ կապված Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև այն, որ https://www.armeps.am/ppcm/public/procurements էլեկտրոնային համակարգի գնումների պլանների բաժնում 45231160 գնումների միասնական անվանացանկի կոդով /ԳՄԱ, CPV կոդեր/ հայտարարված մրցույթի միավորի գին և ընդամենը գումար տողերի դիմաց նշված չի ֆինանսական միջոցների առկայություն, այսինքն մրցույթը հայտարարելիս վերը նշված կայքի համապատասխան մասում նշվել է 15/6:

Իհարկե, https://www.armeps.am/ppcm/public/procurements էլեկտրոնային համակարգի գնումների պլանների բաժնում սկզբում տվյալ մրցույթը հրապարակվել է որպես ֆինանսական միջոց ունեցող, սակայն դրանից անմիջապես հետո հրապարակվել է տեղեկատվություն, որ այս մրցույթի համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն:

Եվ մրցույթի ողջ հրավերի բովանդակությունից էլ է դառնում ակնհայտ, որ տվյալ ընթացակարգը հայտարավել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Մասնավորապես, Ընթացակարգի հրավերի փաթեթի II-րդ մասի օրացույցային գրաֆիկում /հավելված 2/ աշխատանքների կատարման ժամկետների սկիզբը սահմանվել է

«ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից», իսկ որպես ավարտ՝ «ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացուցային օր»: Ընթացակարգի հրավերի փաթեթի II-րդ մասի վճարման ժամանակացույցում /հավելված 3/ աշխատանքի դիմաց վճարումների մասով նշվել են միայն տոկոսներ: Բյուջետային ծախսերի համապատասխան հոդվածով ակնհայտ երևում է, որ Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար մրցույթ կազմակերպելիս նախատեսված չեն եղել ֆինանսական միցոցներ:

Չնայած «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի կարծիքով, նշված հանգամանքը Բողոքաբերի կողմից պետք է վիճարկվեր մինչև հայտերի բացումը, ինչպես դա պահանջում է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, այնուամենայնիվ, գտնում ենք, որ վերոհիշյալ փաստերը ակնհայտորեն վկայում են, որ տվյալ Ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, նույն ինքը՝ Բողոքաբերը չի ներկայացրել: Ավելին, մինչև հայտերի բացումը, եթե «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի մոտ առկա են կասկածներ Ընթացակարգի անցկացման իրավական հիմքի վերաբերյալ, ապա վերջինս ուներ բոլոր հնարավորությունները պահանջելու գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված պարզաբանում պահանջելու իրավունքը, ինչը տվյալ դեպքում տեղի չի ունեցել:

Գտնում ենք, որ վերոհիշյալը բավարար հիմք չի չեղարկելու Ընթացակարգը:

Նշենք, որ գնահատող հանձնաժողովի հայտերի բացման 2020 թվականի հուլիսի 17-ի թիվ 3 նիստում արձանագրված «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում՝ Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին» տեխնիկական վրիպակը նույնպես էական նշանակություն չի կարող ունենալ ողջ մրցույթի արդյունքը որոշելու համար, ինչպես նաև չի կարող առաջացնել «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի շահերի ոտնահարում, քանի որ նշված արձանագրությունից հետո ԲԲԸ-ն մասնակցել է այդ մրցույթով հրավիրված բանակցություններին և իրացրել իր մասնակցության իրավունքը, և մյուս մասնակցին զիջելով իր նվազեցված գնային առաջարկով (քանի որ գնային առաջարկի ինքնարժեքից նվազեցումը արգելվում է), բաց մրցույթը ավարտին հասնելուց՝ նոր որոշել է բարձրաձայնել նշված տեխնիկական վրիպակը:

ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը նաև հիմնավորել է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը՝ մատնանշելով

գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան պահանջը, այն է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետը և սույն թվականի հունիսի 3-ին ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերի փաթեթի 1-ին մասի 5.1-րդկետը»: Ավելին, այս հիմքը բանակցությունների փուլում ԲԲԸ-ի ներկայացուցիչներին նաև բացատրվել է և հայտնվել, որ գնային առաջարկի ինքնարժեքից նվազեցում կատարելը արգելվում է, քանի որ այդ դեպքում գնային առաջարկը կհակասի նշված նորմերի պահանջներին: Հատկանշական է, որ նիստի ժամանակ այս հարցի հետ կապված «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն հայտարարել է, որ ինքնարժեշից նվազեցման հետ կապված հարցը կվիճարկի գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, ինչին հանձնաժողովը պատասխանել է, որ վստահ է այս հիմքով մասնակցի հայտը մերժելու հարցի իրավաչափության մեջ, քանի որ առկա է թե ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը ինքնարժեքի նվազեցման իրավաչափության հետ կապված, և թե գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց համապատասխան որոշումները: Սակայն, ի զարմանս գնահատող հանձնաժողովի, բողոքը ներկայացվել է միանգամայն այլ, մտածածին հիմքերով, մի կողմ թողնելով «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին մտահոգություն պատճառած իրական հիմքը:

Հրավիրված բանակցությունները հետաձգելու առումով հայտնում ենք, որ այն հետաձգելու հիմնական պատճառը (ակնհայտ է բանակցությունների տեսաձայնագրությունից) եղել է Բողոքաբերի անհամաձայնությունը գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացրած բանակցությունների կանոնների հետ՝ կապված ինքնարժեքի նվազեցման հետ: Այս հարցով պայմանավորված և նկատի ունենալով, որ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ն այս խնդրի հետ կապված հարցում էր կատարել ՀՀ ֆինանսների նախարարության և սպասում էր պաշտոնական պատասխանի, գնահատող հանձնաժողովը այս դրդապատճառով հետաձգեց նիստը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից պաշտոնական դիրքորոշում ստանալու նպատակով: Սակայն նիստը հետաձգելու այս բոլոր հիմքերը չամրագրվեցին արձանագրության մեջ, ինչը բնավ, չէր կարող առաջացնել Բողոաբերի իրավունքների ոտնահարում, ավելին, նաև Ընթացակարգի չեղարկում:

Գտնում ենք, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից բարձրացված մտածածին կամ տեխնիկական վրիպակի արդյունք հանդիսացած հիմքերը չեն կարող դիտարկվել որպես գնումների մասին ՀՀ օրենսդրության այնպիսի խախտումներ, որոնք ինչպես նշում է ԲԲԸ-ն, հանգեցրել են գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավեր իրականացմանը և պետք է հանգեցնեն արդնե ավարված մրցույթի չեղարկմանը:

Ավելին, նման հիմնավորումներով այս փուլում մրցույթի չեղարկումը էական վնաս կարող է հասցնել ինչպես տվյալ մրցույթով իրավաչափորեն հաղթած «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ին, այնպես էլ Գավառի համայնքի, իսկ ընդհանուր առմամբ նաև ողջ պետության օրինական շահերին, քանի որ մրույթի չեղարկման դեպքում Գավառի քաղաքապետարանը ստիպված է լինելու կրկին հայտարարել բաց մրցույթ, այնուհետև այն ամփոփել, որի արդյունքում լավագույն դեպքում նոր հայտարարված մրցույթով պայմանագրի կատարումը կարելի է ակնկալել միայն 3 ամիս հետո, որի արդյունքում փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքները ստիպված պետք է կատարվեն վատ եղանակային պայմաններում»:

Ելնելով վերոգրյալից՝ Երրորդ անձը Բողոքներ քննող անձին խնդրել է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/87 ծածկագրով բողոքը մերժել:

5. **<u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը</u>.**

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Երրորդ անձի 03.08.2020թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 05.08.2020թ.-ի թիվ ԲՔԱ-ԼՕ/1/11644-2020 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

Ծառայությունը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ հայտնելով, որ Ծառայությանը հասանելի մի շարք բազաների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Պատվիրատուն մրցույթը հայտարարել է 100 % ֆինանսական միջոցների համար նախատեսված տողում, այլ ոչ՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված տողով: Հրապարկման նույն օրը՝ 04.06.2020թ.-ին, բացվել է երկու տող՝ մեկը պայմանով, մյուսն՝ առկա ֆինանսական միջոցներով՝ 100 %-ի չափով, ինչպես որ նշված է 27.05.2020թ.-ն հաստատված գնումների պլանում: Հետևաբար, վերջինը փաստում է այն մասին, որ ֆինանսական միջոցները հատկացված են եղել:

Ինչպես նաև Ծառայության ներկայացուցիչը անդրադարձ կատարեց և իր դիրքորոշումը հայտնեց Պատվիրատուի կողմից ներկայացված՝ Գավառի քաղաքապետի կողմից տրված տեղեկանքին, Հանձնաժողովի կողմից կազմված արձանագրություններին, բողոքի և Երրորդ անձի կողմից ներկայացված դիրքորոշման այլ հանգամանքներին:

6. **ԳԲՔԱ-ԼՕ**-2020/87 **բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Գավառի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.06.2020թ.-ին հայտարարվել է «ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ/Ընթացակարգ):

ii. Մրցույթը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 03.06.2020թ. թիվ 1 որոշմամբ:

iii. Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 15.06.2020թ.-ին ժամը 11:00-ն ներառյալ:

iv. Մրցույթի հրավերի հավելված 7-ի՝ պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 2-ով՝ Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետի սկիզբ է սահմանվել՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից, իսկ ավարտ՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացուցային օր:

v. Նույն հավելված 7-ի անբաժանելի մաս կազմող հավելված 3-ով՝ վճարման ժամանակացույցով աշխատանքների կատարման դիմաց վճարումների չափ սահմանված չէ:

vi. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնով գնման առարկա է հանդիսանում Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45231160:

vii. www.armeps.am/PPCM/ կայքում (https://armeps.am/ppcm/public/procurements) առկա տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ

Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար նշվել է՝

- 45231160/1՝ քանակը 1, իսկ գինը՝ 289 978 900 ՀՀ դրամ,
- 45231160/502՝ քանակը 0, իսկ գինը՝ 0 ՀՀ դրամ:

viii. 27.05.2020թ.-ին հաստատված և www.gnumner.am համացանցային կայքում 01.06.2020թ.-ին հրապարակված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանի 2020թ. գնումների փոփոխված պլանում առկա տվյալների համաձայն՝ գնման առարկայի՝ Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ նշվել է 45231160՝ քանակը 1, իսկ գինը՝ 289 978 900 ՀՀ դրամ:

ix. www.gnumner.am համացանցային կայքում 11.06.2020թ.-ին, 29.06.2020թ.-ին, 28.07.2020թ.-ին և 03.08.2020թ.-ին հրապարակված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանի 2020թ. գնումների պլանի փոփոխություններում նույնպես առկա է գնման առարկայի՝ Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդը՝ 45231160, քանակը՝ 1, գինը՝ 289 978 900 ՀՀ դրամ:

x. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.07.2020թ.-ի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջները, ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ է ճանաչել համապատասխանաբար՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ին, «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին և «ՎՄՎ ՔԱՄՓԱՆԻ» ՍՊԸ-ին:

xi. Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի և 2020 թվականի հունիսի 3-ին ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով հայտարարված մրցույթի հրավերի փաթեթի 1-ին մասի 8.7-րդ կետի պահանջները, 2020 թվականի հուլիսի 21-ին, ժամը 12:00-ին, ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12, երկրորդ հարկ 8-րդ աշխատասենյակ հասցեում, ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների հետ տեղի կունենան միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման և ընտրված ու հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով /անհրաժեշտ է ապահովել բոլոր մասնակիցների ներկայությունը կամ համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչներ/:

xii. Հանձնաժողովի 21.07.2020թ.-ի թիվ 4 արձանագրության 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ մրցույթի բանակցություններին չի ներկայացել «ՎՄՎ ՔԱՄՓԱՆԻ» ՍՊԸ-ն, ուստի Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի և 2020 թվականի հունիսի 3-ին ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերի փաթեթի 1-ին մասի 8.7-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը 1 /մեկ/ աշխատանքային օրով:

xiii. Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ 2020 թվականի հուլիսի 23-ին, ժամը 11:00-ին, ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12 երկրորդ հարկ 8-րդ աշխատասենյակ հասցեում, ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների հետ տեղի կունենան միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման և ընտրված ու հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով /անհրաժեշտ է ապահովել բոլոր մասնակիցների ներկայությունը կամ համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչներ/:

xiv. Հանձնաժողովի 23.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետը և սույն թվականի հունիսի 3-ին ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերի փաթեթի 1-ին մասի 5.1-րդ կետը, որոշել է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը մերժել և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ին:

xv. Գավառի քաղաքապետի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Գավառ համայնքի 2020 թվականի ֆոնդային բյուջեում Գավառ համայնքի բյուջետային գործառնական դասակարգման 04.5.1, 5113 հոդվածով 2020 թվականի համար հաստատված ծախսը կազմում է 127037,7 հազ. դրամ, որից 96332,9 հազ. դրամը նախատեսված է Գավառ համայնքի Արծրունի Եղբայրների, Դաշտոյան և Թումանյան փողոցների ասֆալտապատման և մայթերի հիմնանորոգման աշխատանքների, տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության նախորդ տարվա պարտքի մարմանը, իսկ մնացած 30704,8 հազ. դրամը Գավառ համայնքի Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար, որը ավելացվել է վերոնշյալ հոդվածում 25.05.2020 թվականի Գավառ համայնքի ավագանու թիվ 56 որոշմամբ:

7. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից 29.07.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու

նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման

ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Գավառի քաղաքապետարանի կողմից Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.06.2020թ.-ին հայտարարված «ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 1-ին չափաբաժնով գնման առարկա է հանդիսանում Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45231160:

www.armeps.am/PPCM/ կայքում (https://armeps.am/ppcm/public/procurements) առկա տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար նշվել է՝

- 45231160/1՝ քանակը 1, իսկ գինը՝ 289 978 900 ՀՀ դրամ,
- 45231160/502՝ քանակը 0, իսկ գինը՝ 0 ՀՀ դրամ:

www.gnumner.am համացանցային կայքում 01.06.2020թ.-ին հրապարակված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանի 2020թ. գնումների փոփոխված պլանում առկա տվյալների համաձայն՝ գնման առարկայի՝ Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ նշվել է 45231160՝ քանակը 1, իսկ գինը՝ 289 978 900 ՀՀ դրամ:

www.gnumner.am համացանցային կայքում 11.06.2020թ.-ին, 29.06.2020թ.-ին, 28.07.2020թ.-ին և 03.08.2020թ.-ին հրապարակված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանի 2020թ. գնումների պլանի փոփոխություններում նույնպես առկա է գնման առարկայի՝ Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդը՝ 45231160, քանակը՝ 1, գինը՝ 289 978 900 ՀՀ դրամ:

Գավառի քաղաքապետի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Գավառ համայնքի 2020 թվականի ֆոնդային բյուջեում Գավառ համայնքի բյուջետային գործառնական դասակարգման 04.5.1, 5113 հոդվածով 2020 թվականի համար հաստատված ծախսը կազմում է 127037,7 հազ. դրամ, որից 96332,9 հազ. դրամը նախատեսված է Գավառ համայնքի Արծրունի Եղբայրների, Դաշտոյան և Թումանյան փողոցների ասֆալտապատման և մայթերի հիմնանորոգման աշխատանքների, տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության նախորդ տարվա պարտքի մարմանը, իսկ մնացած 30704,8 հազ. դրամը Գավառ համայնքի Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար, որը ավելացվել է վերոնշյալ հոդվածում 25.05.2020 թվականի Գավառ համայնքի ավագանու թիվ 56 որոշմամբ:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Գավառի քաղաքապետարանի կողմից Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.06.2020թ.-ին հայտարարված «ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթը հայտարարելով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի՝ Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար 27.05.2020թ.-ին հաստատված և www.gnumner.am կայքում 01.06.2020թ.-ին հրապարակված գնումների պլանով (փոփոխություններով) նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրով՝ 45231160, նախատեսված է 289 978 900 ՀՀ դրամ գոումարի չափով ֆինանսական միջոցներ, որպիսի պայմաններում օրենքի վերոնշյալ հոդվածի կիրառումը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ www.armeps.am/PPCM/ կայքում որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար առանց ֆինանսական միջոցներով նշված տողն հակասում է www.gnumner.am համացանցային կայքում 01.06.2020թ.-ին հրապարակված՝ 27.05.2020թ.-ին հաստատված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանի 2020թ.-ի գնումների փոփոխված պլանում առկա տվյալներին, համաձայն որի՝ գնման առարկայի ձեռքբերման համար նախատեսված են ֆինանսական միջոցներ: Ընդ որում, նույնաբովանդակ տեղեկատվություն են պարունակում նաև www.gnumner.am համացանցային կայքում 11.06.2020թ.-ին, 29.06.2020թ.-ին, 28.07.2020թ.-ին և 03.08.2020թ.-ին հրապարակված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի

քաղաքապետարանի 2020թ. գնումների պլանի փոփոխություններում, որոնցում նույնպես առկա է ֆինանսական միջոցների առկայության տողը (գնման առարկան նշված է գնման ընդհանուր գումարով):

Միաժամանակ, հիմք ընդունելով Գավառի քաղաքապետի կողմից տրված և գործի նյութերում առկա տեղեկանքը, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Գավառ համայնքի 2020 թվականի ֆոնդային բյուջեում Գավառ համայնքի բյուջետային գործառնական դասակարգման 04.5.1, 5113 հոդվածով 2020 թվականի համար հաստատված ծախսը կազմում է 127037,7 հազ. դրամ, որից 30704,8 հազ. դրամը նախատեսված է Գավառ համայնքի Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար, որը ավելացվել է վերոնշյալ հոդվածում 25.05.2020 թվականի Գավառ համայնքի ավագանու թիվ 56 որոշմամբ:

Ամբողջացնելով վերը թվարկված հանգամանքները և դրանք դիտարկելով Կարգի 16-18-րդ կետերի դրույթների համատեքստում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ սույն դեպքում Հանձնաժողովի կողմից կազմակերպված առանց ֆինանսական միջոցների նախատեսման գնման ընթացակարգը/մրցույթը, կազմակերպվել է առանց գնումների պլանի՝ իրավական հիմքի: Սույն դեպքում, Կարգի 16-րդ կետի իմաստով, գնման առարկան՝ գնման ընդհանուր գումարի նշմամբ ներառված է գնումների պլանում, որը հաստատված և հրապարակված է՝ սահմանված պահանջներին համապատասխան: Սակայն Հանձնաժողովի կողմից գնման գործընթացը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, այն է՝ առանց ֆինասական միջոցների առկայության, որպիսի պարագայում, Կարգի 18-րդ կետի իմաստով, գնման գործընթացը/մրցույթը պետք է կազմակերպվեր գնումների պլանում գնման առարկայի՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման, և պայմանով, որ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում կկատարվի համապատասխան լրացում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև նշել, որ եթե անգամ 27.05.2020թ.-ին հաստատված և 01.06.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանում տեղ է գտել վրիպակ և Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցը շփոթմունքի արդյունքում է պլանում ներառել գնման առարկան՝ գնման ընդհանուր գումարով, ապա www.gnumner.am համացանցային կայքում 11.06.2020թ.-ին, 29.06.2020թ.-ին, 28.07.2020թ.-ին և 03.08.2020թ.-ին հրապարակված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանի 2020թ. գնումների պլանի փոփոխություններում նույնպես գնման առարկան ներառված է ֆինանսական միջոցների առկայությամբ՝

ընդհանուր գումարով, որով հերքվում են Պատվիրատուի ներկայացուցչի պնդումները՝ կապված վրիպման հետ: Ընդ որում, պետք է հավելել նաև, որ նույնիսկ, եթե աշխատակցի շփոթմունքն եղել է մի շարք անգամ և այդ շփոթմունքի հետևանքն է նաև նույն սխալի կրկնակիությունը՝ հետագայում հաստատված և ապա հրապարակված գնումների պլանում, ապա Գավառի քաղաքապետի կողմից տրված և գործի նյութերում առկա տեղեկանքի համաձայն՝ Գավառ համայնքի Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար 25.05.2020թ.-ի դրությամբ նախատեսվել է 30 704 800 ՀՀ դրամ գումար:

Վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Հանձնաժողովը, մինչև գնման գործընթաց սկսելը, նախ՝ պետք է վերջնականապես հստակեցնի ֆինանսական միջոցների առկայությունը կամ բացակայությունը, այնուհետև նոր միայն սկսի գնման գործընթացը, և երկրորդ՝ Գավառ համայնքի Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար 25.05.2020թ.-ի դրությամբ նախատեսված 30 704 800 ՀՀ դրամ գումարի առկայությունն արդեն իսկ բացառում է գնումը կատարել (գործընթացը հայտարարել) Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առանց ֆինանսական միջոցների առկայության:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Գավառի քաղաքապետարանի կողմից Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.06.2020թ.-ին հայտարարված «ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, կազմակերպվել և գնման գործընթացը սկսվել է առանց իրավական հիմքի, քանի որ, ինչպես վերը նշվեց, հաստատված գնումների պլանում ներառված գնման առարկան նշված է գնման ընդհանուր գումարով, որպիսի պայմաններում «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ գնման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից 29.07.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/87 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**